

**ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԱՎԱԳԱՆՈՒՆ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ
2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ**

Աշտարակ համայնքի 2025 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի վարչական բյուջեի եկամտային մասով նախատեսված փաստացի եկամուտը կազմել է 3.659.743.7 հազար դրամ, որը տարեկան ծրագրի նկատմամբ (5 056 508.9 հազար դրամ) կատարվել է 72.4 %-ով (տե՛ս հատված 1): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ գերակատարվել է 454 368.7 հազար դրամով:

Ըստ հարկատեսակների կատարողականը ունի հետևյալ տեսքը.

Հաշվետու ժամանակաշրջանում գույքային հարկեր անշարժ գույքի փաստացի եկամուտը կազմել է 288031.2 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 7.9 %-ը, իսկ տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 54.8 %-ով: Գույքային հարկեր այլ գույքից (փոխադրամիջոցների) գծով փաստացի եկամուտը կազմել է 358 772.4 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 9.8 %-ը, իսկ տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 63.8 %-ով:

Տեղական տուրքերի գծով փաստացի եկամուտը կազմել է 114 006.4 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 3.1 %-ը, տարեկան պլանի նկատմամբ կատարվելով 127.8 %-ով:

Պետական տուրքերի գծով փաստացի եկամուտը կազմել է 20 368.6 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 0.56 %-ը, տարեկան պլանի նկատմամբ կատարվելով 67.8 %-ով:

Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայի մասով նախատեսված 2 557 009.2 հազար դրամը հատկացվել է:

Պետական բյուջեից տրամադրվող սուբվենցիա երաժշտական դպրոցի ազգային նվագարանների ուսուցման նպատակով հատկացվել է 3 779.4 հազար դրամ, 2 457.0 հազար դրամ կամավոր ատեստավորման համար, 822.2 հազար դրամ մասնագիտական վերապատրաստման համար և 13 920.7 հազար դրամ սոցիալական որոշ խմբերի 1.5-5 տարեկան երեխաների համար:

Այլ եկամուտների գծով փաստացի եկամուտը կազմել է 317 776.6 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 8.7 %-ը, իսկ տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 77.1 %-ով: Այլ եկամուտների մեջ ներառված գույքի վարձակալությունից եկամուտների գծով փաստացի եկամուտը կազմել է 39 649.3 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 1.8 %-ը, իսկ տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 54.4 %-ով: Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից եկամուտները կազմել է 2 798.6 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 0.08 %-ը, իսկ տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 70.0 %-ով: Վարչական գանձումներից փաստացի եկամուտը կազմել է 249 890.5 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 6.8 %-ը, տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 75.6 %-ով: Տույժերից և տուգանքներից փաստացի եկամուտը կազմել է 1 532.0 հազար դրամ, տարեկան պլանի նկատմամբ կատարվելով 76.0 %-ով, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 0.04 %-ը: Այլ եկամուտների գծով փաստացի եկամուտը կազմել է 6 706.2 հազար դրամ որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 0.2 %-ը, տարեկան պլանի նկատմամբ կատարվելով 298.0 %-ով:

Ծախսերի գծով կադրորողականը ունի հետևյալ տեսքը .

Հաշվետու ժամանակաշրջանում փաստացի ծախսը կազմել է 2 893 823.0 հազար դրամ, պլանի նկատմամբ այն կատարվել է 40.1 %-ով (տես հատված 2,6):

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների հատվածին հատկացվել է 609 953.2 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 21 %-ը:

Տնտեսական հարաբերությունների գծով հատվածին հատկացվել է 188 266.3 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 6.5 %-ը:

Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը բյուջեում արտացոլվում են տնտեսական հարաբերություններ մասում, բացասական նշանով և հաշվետու ժամանակաշրջանում կազմում են 460 402.3 հազար դրամ, տարեկան պլանի դիմաց կատարվելով 11.4 %-ով:

Շրջակա միջավայրի պաշտպանության համար հատկացվել է 354 548.2 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված վարչական բյուջեի ծախսերի 14.6 %-ը:

Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայության համար հատկացվել է 555 542.7 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 19.2 %-ը:

Առողջապահության ոլորտին հատկացվել է 5 791.0 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված վարչական բյուջեի ծախսերի 0.2 %-ը:

Հանգիստ, մշակույթ և կրոն ոլորտի պահպանման համար հատկացվել է 215 506.2 հազար դրամ, կազմելով փաստացի կատարված ծախսերի 7.4 %-ը:

Կրթության ոլորտին է հատկացվել 937 236.7 որը կազմում է փաստացի ծախսերի 32.3 %-ը, որից՝ նախադպրոցական հիմնարկների պահպանման համար հատկացվել է 816 283.5 հազար

դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 28.2 %-ը, իսկ արտադարձական հիմնարկների պահպանման համար հատկացվել է 118 868.2 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 4.1 %-ը:

Սոցիալական պաշտպանություն ոլորտի համար հատկացվել է 26 639.9 հազար դրամ որը կազմում է փաստացի կատարված վարչական բյուջեի ծախսերի 1,0 %-ը:

Հաշվետու ժամանակաշրջանում ընթացիկ ծախսերի (վարչական բյուջե) ֆինանսավորմանը հատկացվել է 2 428 280.4 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 83.9 %-ը:

Ընթացիկ ծախսերից աշխատանքի վարձատրության հոդվածին հատկացվել է 419 949.8 հազար դրամ կամ վարչական ծախսերի 17.2 %-ը, ծառայությունների և ապրանքների ձեռք բերմանը հատկացվել է 181 466.1 հազար դրամ կամ վարչական ծախսերի՝ 7.4 %-ը: Սուբսիդիաների տեսքով ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին է հատկացվել համայնքի վարչական բյուջեի փաստացի կատարված ծախսերի 37.5 %-ը կամ 911 735.9 հազար դրամ:

Դրամաշնորհի տեսքով ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին և համայնքային հիմնարկներին հատկացվել է 886 828.6 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի ծախսերի 36.5 %-ը, իսկ այլ ծախսերին է տրամադրվել 0.3 %-ը, սոցիալական օգնություն՝ 0.8% է հատկացվել:

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքային բյուջեի ծախսերի 31.9 %-ը կամ 925 944.9 հազար դրամը ուղղվել է ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորմանը, այդ միջոցներից 12 676.2 հազար դրամը կամ 1.4 %-ը տրամադրվել է մեքենաներ և սարքավորումներ ձեռք բերելու համար, 29 856.0 հազար դրամը կամ ֆոնդային բյուջեի ծախսերի 3.2%-ը հատկացվել է նախագծահետազոտական աշխատանքների կատարմանը, 883 412.7 հազար դրամը կամ 95.4 %-ը շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգմանը և կառուցմանը (տե՛ս հատված 3):

Աշտարակ համայնքի բյուջեի պակասուրդը (դեֆիցիտը) կազմել է 168 139.0 հազար դրամ (տե՛ս հատված 4):

Պակասուրդի (դեֆիցիտի) ֆինանսավորմանն է ուղղվել տարեսկզբի ազատ մնացորդը՝ 259 834.5 հազար դրամ (տե՛ս հատված 4, 5), իսկ հաշվետու ժամանակաշրջանի վերջում բյուջեի հավելուրդը կազմել է 1 063 324.4 հազար դրամ: